ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՐՈՆ ՀԱՐՈՒԹ ՀԱՄՈՒՏՅՈՒՆՅԱՆԻՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հարգելի պարոն Համուտյունյան,

2022թ. նախատեսվում է Արխիվային փաստաթղթերի պահպանման բաժինը համալրել Էջեան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2007-2014թթ., ՀՀ վարչական դատարանի 2008-2014թթ. և ՀՀ վարչական առաջին ատյանի դատարանների 2001-2014թթ. քննված գործերով (քաղաքացիական, քրեական, միջնորդություններ): Ինչպես նաև ՀՀ Դատական դեպարտամենտի կառուցվածքային ստորաբաժանումների փաստաթղթերով: Գործերի համալրումն իրականացվում է քառ ցուցակների՝ ինչ ուս իսաս ընդունման-հանձնման միջոցով: Բացի այդ, 2007թ. ինստ քննված գործերով դիմումներն ուղարկվում էին համապատասխան դատարաններ՝ օրինով սահմանված կարգով հնուազդա ընթացքը լսելու համար:

Վերը նշված համալրումից հետո գիմումների ընթացքն ապահովելու է Արխիվային փաստաթղթերի պահպանման բաժինը: Անբնդհատ հատուիքների բահանով այդ նոսյալի աշխատանքը հնարավոր չէ ապահովել:

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ Արխիվային փաստաթղթերի պահպանման բաժնին համալրել մեկ առաջատար մասնագետի և մեկ առաջին կարգի մասնագետի հաստիքով:

Արխիվային փաստաթղթերի պահպանման

բաժնի պետ

Ռուզաննա Հարությունյան

21.03.2022թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

(Դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչության (այսուհետ՝ Վարչություն) հաստիքների ավելացման անհրաժեշտության վերաբերյալ)

Վարչությունն իր կանոնադրական լիազորությունները (16.03.2022թ. դրությամբ) իրականացնում է թվով 13 աշխատակիցների միջոցով *(1 վարչության պետ, 2 բաժնի պետ, 5 գլխավոր մասնագետ, 4 առաջատար մասնագետ, 1 առաջին կարգի մասնագետ)*:

Հիշյալ աշխատակիցների ներգրավմամբ, ի թիվս այլնի, իրականացվում է.

ՀՀ թվով 16 դատարանների կիսամյակային և տարեկան վիճակագրության հավաքագրում և վարում, այդ թվում՝ ըստ առանձին դատավորների.

ՀՀ թվով 16 դատարանների գործունեության ամենօրյա մշտադիտարկում.

Վիճակագրական համապատասխան տվյալների նախորդ տարվա տվյալների համեմատականի կազմման աշխատանքների իրականացում.

Դատավորների գործունեության գնահատման շրջանակներում դատավորների կատարողականի վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրում և ամփոփում.

Բարձրագույն դատական խորհրդի հանձնարարությամբ ՀՀ դատարանների և առանձին դատավորների ծանրաբեռնվածության վեր հանում:

Վճարված և դատական ակտով վճարման ենթակա պետական տուրքի ընդհանուր չափի վերաբերյալ տվյալների հավաքագրում և ամփոփում.

ՀՀ օրենսդրությամբ սահմանված առանձին իրավադրույթների կիրառման վերաբերյալ դատական պրակտիկայի ուսումնասիրություններ.

Դատական պրակտիկայի ամփոփում և վերլուծություն.

Ուսումնասիրություններ դատարանների կողմից դատական գործերի քննության միջին ողնինիշային տևողության վերաբերյալ.

2021թ. և 2022թ. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում կատարված փոփոխություններով և լրացումներով ՀՀ դատական համակարգում ավելացվել է **թվով 70 դատավորի հաստիք:**

Հարկ է նշել, որ ավելացված դատավորների հաստիքների քանակով պայմանավորված ավելանում է Վարչության ծանրաբեռնվածությունը, ինչը մասնավորապես դրսևորվում է դատական վիճակագրության վարման և ամփոփման, առանձին կոռուպցիոն բնույթի հանցագործություններով և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթներով վիճակագրության վարման, դատավորների գործունեության գնահատման շրջանակներում դատավորների կատարողականի վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրման, ՀՀ դատարանների և առանձին դատավորների ծանրաբեռնվածության վեր հանման, դատական պրակտիկայի ամփոփման և վերլուծության նպատակով իրականացվող աշխատանքների կատարման հրամայականով:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվում է Դատական պրակտիկայի վերլուծության և մշտադիտարկման վարչության Դատական պրակտիկայի վերլուծության բաժնում ավելացնել 1 գլխավոր մասնագետի, իսկ Մշտադիտարկման և դատական վիճակագրության բաժնում 1 գլխավոր մասնագետի և 1 առաջատար մասնագետի հաստիքներ:

ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՏԵՓԱՆՅԱՆ**